

Բայց ասոնք գրուեցան,
որ հաւատաք թէ Յիսուսը
Քրիստոսն է՝ Աստուծոյ Որ-
դին, եւ որ հաւատալով
կեանք ունենաք Անոր
անունովը : Յովն. Ի. 31 :

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵԻՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ -
ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Աստուած ձեզ պիտի հաս-
տատէ մինչեւ վերջը՝ անմե-
ղադրելի բլլալու մեր Տէր
Յիսուս Քրիստոսի օրը : Հա-
ւատարիմ է Աստուած որ Իր-
մով կանչուեցանք հաղորդ-
բլլալու Իր Որդւոյն՝ մեր Տէր
Յիսուս Քրիստոսին :
Ա. Կորնթ. Ա. 8-9 :

"PANPÈRE" REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE
Բաժնետէրն տարեկան. — Ֆրանսա եւ Սուրիա 5 ֆր. Արտասահման 1,50 շիլ կամ 40 ամերկ. յէնթ
RÉDACTEUR H. N. GHAZAROSSIAN, 29, Rue Fauchier — MARSEILLE (France)

ԹԻԻ 3

Դ. ՏԱՐԻ

ՄԱՐՏ 1928

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Կ Ե Ն Ա Յ Հ Ա Յ Ը

(ՆԱԽԱՋԱՏԻԿԵԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ՅՈՒՆ. Զ. ԳԼՈՒԽԵՆ)

Յիսուս հինգ հազարը հրաշքով կերակրած էր Գեներեսարեթի ծովեզերքը : Այս զէպքը առիթ տուած էր ժողովուրդին մէջ մեծ ոգեւորութիւն մը ստեղծելու :

Պատանիին ծրարին մէջ գտնուած հինգ հացն ու երկու ձուկերը տեսած էին ու նոյն ատեն չէին կրնար չանգիտանալ թէ ուտողները մէկ կամ երկու հոգի չէին, այլ հազարներ. ուստի իրենց գերագոգուած միտքը կը պրպտէր անցեալի զէպքերն ու զէմքերը, մանաւանդ այն ատենուան խօսքերը, զորս այդ մեծ զէմքերէն մին խօսած էր առատ եւ ձրի հաց բաշխելու միջոցին : «Բու Տէր Աստուածդ քու եղբայրներուդ մէջէն ինծի պէս մարգարէ մը պիտի հանէ : Անոր մօտիկ ըրէք» (Բ. Օրին. ԺԸ. 15) :

Միթէ՞ ասոր համար չըսուեցաւ, միթէ՞ այս Մեսիան չէ : Ու Անոր ձեռք զարնել կ'ուզէին, որ զԱնիկա թագաւոր ընեն (համար 15) : Այսուամենայնիւ Տէրոջը նպատակը չէր զանոնք շեղ քայլերու եւ խօլ գործունէութեանց առաջնորդել (հմր. 16), հապա ցուցնել անոնց թէ ինքը միակ կենաց հացն էր, զոր խնդրելու էին, եւ քանի որ հետեւեալ օրը Իր երեւնալովը սոյն զգացումները դարձեալ կ'արծարծուէին, պատեհութենէն օգուտ քաղելով՝ ժողովուրդին միտքը առաւել եւս ճշմարիտ հացին վրայ կեդրոնացնելուն պատակաւ կ'ըսէ, «Գացէք գոր-

ծեցէք ոչ թէ կորստական կերակուրին համար հապա այն կերակուրին համար որ յաւիտենական կեանքի մէջ կը մնայ. զոր Որդին Մարդոյ ձեզի պիտի տայ (հմր. 27) եւ այս է Աստուծոյ գործը, որ անոր զրկածին հաւատաք» (հմր. 29) : Ա'րդ.

ԵՍ ԵՄ ԿԵՆԱՅ ՀԱՅԸ (հմր. 53), ինծի հաւատացէ՛ք : Չեմ այն հացին նման, զոր երէկ կերաք ու այսօր դարձեալ անօթեցած էք :

Կեանքի կարեւորագոյն պայմանն է ուտել եւ խմել, սակայն ես այն հացն եմ, որ ուտողին բաղձացեալ կեանքը կուտամ : Կեանքի ամենակարեւոր անօթութիւնը, հոգիին անօթութիւնը յագեցնող հացն եմ ԵՍ, ան որ ԻՆՇԻ կուգայ (զիս կ'ուտէ) երբեք պիտի չանօթենայ եւ ան որ ԻՆՇԻ կը հաւատայ (ինձմէ կը խմէ) պիտի չծարաւի :

Անօթութիւնը անկարողութիւն յառաջ կը բերէ : Ինծի եկողը նոր գորութիւն կ'ընդունի, նոր կեանք :

Մեղքին անմիջական արդիւնքը ծարաւն է — չարչարանքը, վասնզի ծարաւը կը չարչարէ : Խղճի չարչարանքը միայն այն ատեն կ'անհետանայ, երբ մէկը ինձմէ խմելով հաւատքի միջոցաւ մեղքի թողութեան գիտակցութեան — խաղաղութեան — կը հասնի : Դուք հացերը կը փնտռէք, աստուածային պարգեւները, հանգստութիւնը, օրհնութիւն-

ները. բայց ես անձամբ եկած եմ, այդ բոլորին Ակն ու Աղբիւրը, զիս ունեցողը այս բոլոր շնորհքներուն արդէն կը տիրանայ :

ԵՍ ԵՄ ԵՐԿԻՆՔԷՆ ԻԶԱՄ ՀԱՅԸ (համար 41) : Մեր Տէրը աւելի բացատրելու պէտքը կը զգայ, շատ աւելի զօրաւոր եւ շօշափելի արտայայտութեամբ : Ու կը յարէ. «Ձեր նախահայրերուն կերած մանանան, որ երկինքէն (ամպերէն) իջաւ, ուրիշ բան չէր եթէ ոչ երկինքէն (չօրը քովէն) իջած մանանային (իմ) նախանշանը» :

Ինչպէս որ ան ամէն օր թարմ հաւաքուելու էր, նոյնպէս ես ալ թարմ եմ ամէն օր, եւ իւրաքանչիւր հաւատացեալի համար ամէն օր թարմ ըլլալու եմ : Ես եւ իմինս, իմինս եւ Ես, վասնզի ան որ ինծի կուգայ բնաւ դուրս պիտի չհանեմ (հմր. 57), որովհետեւ չօրը պատասխանատու եմ : Անոր կամքը աս է որ այն ամէնը զոր ԻՆՔ Ինծի տուաւ չկորսնցնեմ Անկէ, հապա անոր յարութիւն առնել տամ վերջին օրը :

Երաշխաւորուած, յաւիտեանս երաշխաւորուած :

«Օրհնեալ երաշխիք իմն է Յիսուս,

Ո՛հ այս խորհուրդը ի՛նչ քաղցր է հոգւոյս
Փրկութեան ժառանգ Տէրոջն եմ ես,

Իր արիւնով փրկուած մեղքերէս» :

Երկինքէն իջած հացը, Այն որ չօրը ծոցն էր, Անիկա եկաւ, որպէսզի ճշմարտութեան հասնինք եւ Անոր լեցունութենէն շնորհք առնենք շնորհքի տեղ :

Ներկայ ժամանակին մէջ կան հացեր, եւ ամէն օր նորեր ալ կը ստեղծուին, բայց անոնք չեն երկինքէն իջած հացը, հապա երկրային : Այդ երկրային հացերը, ժամանակաւոր թմրութիւն մը կուտան ստամոքսին, սակայն անոր անօթութիւնը չեն կրնար յագեցնել :

Այս հարցը մտքով, բանականութեամբ չըմբռնուիր, մարդկային երեւակայութիւնով չըմբռնուիր, չստեղծուիր, ինչպէս շատ շատեր կը ջանան ինքնայատուկ պատկեր մը շինել Անոր մասին : Սակայն մարդկային մտքի քննութեամբ, փիլիսոփայութեամբ չէ որ պիտի հասկցուի Անոր էութիւնը : Պէտք է վստահաբար ուտել զԱյն կեանք ստանալու համար : Այն ատեն աւելի լաւ կրնանք ճանչնալ զԱյն :

Անիկա օր բոլոր օրէ աւելի տեղեակ կ'ընէ իր գաղտնիքներուն : Կեանք տալէն յետոյ, աւելի կեանքի ուղիներէն կ'առաջնորդէ, բաւ է որ վստահինք Իրեն եւ ուտենք զԻնքը, քանզի Ինքն է որ երբորդ անգամ եւ այս պահուս քայլ մը աւելի բացատրելով կ'ըսէ.

«ԵՍ ԵՄ ԿԵՆԴԱՆԻ ՀԱՅԸ (հմր. 31) : Ո՛չ թէ միայն կենաց հացը, զոր ուտելով՝ ապրելու զօրութիւն, գործելու եռանդ եւ ուրախութիւն կ'ունենանք, հապա հաց մը որ նոյնն է Լըէկ ու այսօր եւ յաւիտեանս» : Մանանան միայն մէկ օր կրնար դիմանալ, ժամանակի, կլիմայի եւ այլն պարագաներու ազդեցութեան տակ կ'եղծանէր, բայց այս Հացը Իր մէջը կենդանութիւն ունի, զոր կը ներմուծէ Դեռ զիս քը ուտողին մէջ, վասնզի ներգործական ոյժ ունի յաւիտեանս ապրեցնելու (հմր. 32) :

Մանանան ուտողները մեռան : Ես կենդանի եմ Հօրը ձեռքով, այսպէս ալ ան որ զիս կ'ուտէ, ինքն ալ իմ ձեռքովս կենդանի կը մնայ (հմր. 8) : Ծածկուած, յաւիտեանս ծածկուած, փոթորիկէ, անօթութենէ եւ ծարաւէ :

Կ'ըսուի թէ փոթորիկի եւ հապառն աշեկոծութեանց ժամանակ ձուկերը ծովերուն խորերը կ'իջնեն, հոն ծածկուած ըլլալով վերի հովերէն ու ալիքներէն, որոնք չեն կրնար ազդել իրենց : Այսպէս ծածկուած Անոր շնորհքին խորը : Իսկ առանց Քրիստոսի պերճանքի եւ փառքերու մէջ, ճոխ սեղաններու առջեւ, բայց ներքնապէս դատարկ, ծարաւ ու անօթի, մարելու եւ մեռնելու վրայ :

Քրիստոս կենդանի է եւ միայն ԻՆՔՆ է որ կեանք կուտայ : Լիօնի հիւանդանոցներէն միոյն մէջ դեղ մը կայ որ կը կոչուի «մշտնջենապէս երիտասարդ» եւ կ'ըսուի թէ շատ լաւ ազդեցութիւն ունի յոգնած ջիղերու վրայ. շատ հին առողջարար միջոց մըն է : Թէյ մըն է հարիւրաւոր տարիներէ իվեր գործածական, զթութեան քոյրերու կողմէն բոլորին ձրի մատուցանելի : Այս դեղը հեռու տեղեր չդրուիր, ուստի Ամբիկա եւ կամ Հնդկաստան եւ Չինաստան եղողները անկէ չեն կրնար օգտուիլ եւ ոչ ալ Ֆրանսայի ու եւ յուրիշ քաղաքի մէջ եղող բոլոր բնակիչներ :

Այսպէս չէ այս հացը : Մարդկային աչքերու առջեւ սքանչելի եւ սակայն անմատչելի

լուսանկար մը չէ: Անիկա ամենուն մօտ է: Փնտոնեցէք եւ պիտի գտնէք: Ոչ միայն փիլիսոփաները եւ գիտնականները, այլ միջակ մտքի եւ աւելի ցած մտքի տէր եղողներն իսկ կրնան մօտենալ Անոր եւ Անկէ կշտանալ: Ազատ մոտք կայ ամենուն, վասնզի ինք անձամբ այդ դուռը բացած է: Մենք այս վստահ եզրակացութեան եկած ենք, որովհետեւ ինքն է որ չորրորդ եւ վերջին քայլն առնելով առ ի մարդկութիւն կ'ըսէ.

ԱՅՆ ՀԱՅԸ ԶՈՐ ՊԻՏԻ ՏԱՄ, իմ մարմինս է որ ես պիտի տամ աշխարհի կեանքին համար. եթէ Որդւոյ մարդոյ մարմինը չուտէք եւ արիւնը չխմէք ձեր անձերուն մէջ կեանք չէք ունենար: Ով որ իմ մարմինս ուտէ եւ իմ արիւնս խմէ, յաւիտենական կեանք կ'ունենայ (հմր. 54-55):

Ով որ, ոչ թէ որոշ մէկը, որոշ ժողովուրդ մը կամ ազգ մը, հապա ամէնը. ես ալ, դուն ալ:

Կեանքի զօրութիւն տուող ուսելիքն ու ըմպելին, կեանքը յաւիտեանս երկարող, յաւիտենականութեան համար յարուցանելու զօրութիւնը ունեցող կենդանի Հացը կը մատուցուի մարդուն ուտելու եւ խմելու, որպէսզի անիկա «Իր ներսիդին ընակի եւ ինք անոր ներսիդին» (հմր. 51): Միութիւն, կատարեալ միութիւն, Փրկչին եւ փրկուածին միջեւ: Ուրեմն ո՞վ կրնայ զատել զիս Բրիտոսոսի սէրէն (Հոռ. մ. Ը. 55): Միացած Անոր հետ իբր մէկ մարմին՝ կ'եանք ի համար, միացած չարչարանքներով՝ Անոր չարչարանաց, Գեթսեմանիէն մինչեւ Գողգոթա, միացած մահուամբ Անոր մահուան, միացած Անոր հետ գերեզմանի քարին ետեւ, մի քիչ ծածկուելու աշխարհի ու սատանային ցասումէն, ապա փառաւորութեամբ Անոր փառքին արժանանալու դարձեալ յարութիւն առնելով Անոր հետ յարութեան սքանչելի օրունս համար:

* *

Հացը (մարմինը) զոր ինք պիտի տայ աշխարհի կեանքին համար, երկու նշանակութիւնով է:

Ա. Աշխարհի փոխարէն՝ վասնզի աշխարհ մեռնելու էր եւ ո՞րպէսզի չմեռնէր ինք իր մարմինը տուաւ, մեռաւ:

Բ. Աշխարհի կեանքին համար, վա-

սնդի մեռնելով եւ կենդանանալով կենդանութիւն կուտայ նաեւ իր կեանքովն զնուածներուն, վասնզի լման գին վճարած է անոնց համար: «Ես կենդանի եմ եւ ինծի հաւատացողներն ալ յաւիտեանս կենդանի պիտի մնան»:

Մեր Տէրը այս խօսքերը ըսելով կը փափաքէր ժողովուրդը իր մահուան պատրաստել, թէ իր մահը աննպատակ եւ անարժէք բան մը չէր, թէ սարսափելի մահ մը կը սպասէր իրեն, վասնզի այնպիսի մահուամբ միայն մարմին եւ արիւն կրնային զատուիլ իրարմէ, թէ այդ մահուան մէջ էր իսկական փրկութեան միջոցը: Մեսիան բարձր նպատակ ունէր, աւելի բարձր քան հաց մատակարարել: Հացը մեծ պարգեւին հետ եկող երկրորդական պարգեւներէն մին է:

Մեր Տէրը այս ահարկու մահուան գիտակից էր, որքան սարսափելի ըլլալը կը զգար, սակայն ոչ թէ՛ արկածախնդիր հապա դիւցազնական քաջութեամբ դէպի զայն կը յառաջանար: Ոչ թէ յակամայս, հապա կամքով, ազատ կամքով, ազատ մտադրութեամբ: Զինքը ստիպող չկար: Ինքը կրնար իր կեանքը դնել եւ ինքը կրնար առնել, այդ պատուէրը Հօրմէն առած էր, այսուամենայնիւ կամաւ կը դնէր, վասնզի ի յաւիտենից իր որոշումն գործադրել կ'ուզէր, մանաւանդ երեսուն եւ երեք ու կէս տարիներէ ի վեր անձկանօք այդ օրունս կը սպասէր, կը տաղնապէր այդ ժամունան յապաղումին պատճառաւ, որովհետեւ կ'ուզէր ժամ առաջ աղաղակել «Ամէն բան կատարուեցաւ»:

Հոս է ահա Բրիտոսոսով եղած փրկութեան զօրութիւնը:

Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ որ Որդւոյ մարդոյ մարմինը չուտէք եւ Անոր արիւնը չխմէք, ձեր անձերուն մէջը կեանք չէք ունենար (հմր. 54):

Հոգի, այս համարը եւ ասոր հետեւող քանի մը համարները կը յայտնեն քեզ թէ փրկութիւնը, յաւիտենական կեանքը ունենալու համար զինքը ուտել եւ խմել պէտք է: Երբ քու քայլերդ դէպի Աւագ շարժումն ուղղած ես, գիտցիր թէ այդ փրկութեան գործը քեզի համար ալ տեղի ունեցած է, որ հաւատաս եւ

վայելես : Քու առանձնաշնորհդ է այդ, բայց եթէ Անոր մարմինը չուտես (իրեն չգաս), Անոր արիւնը չխմես (իրեն չհաւատաս), կեանք չես ունենար : Ատեն պիտի գայ որ զինքը պիտի փնտռես, սակայն չպիտի գտնես» :

Արդ, զիտէ զԱյն - Արիւնալիցը, որ բարձրացաւ ամէնն ալ իրեն քաշելու : Խորհէ Անոր չարչարանաց վրայ, ընդունէ զԱյն իբր ճշմարիտ սնունդ : Հաւատքդ եւ յոյսդ Անոր վրայ զիր եւ Անկէ ընդունէ՝ «կամենալ եւ ընել» ու զօրութիւնը :

Ու Յաւիտենական կեանք պիտի ունենաս «կենաց Հացով» :

Հ Ո Ւ Թ



Սուրբ գրքին մէջ յիշուած ամենաբարձր եւ ամենազեղեցիկ նկարագրի մը պատկերացումն է Մովսէսի Հոռութիւն պատմութիւնը : Ան, ոչ միայն արեւելեան պարզ եւ անկեղծ սիրոյ նկարագրութիւն մըն է, այլ մասնաւորապէս պատմական իրողութիւն մ'է, որուն մէջ պահուած կան Աստուծոյ պատուական եւ նշանակալից գաղտնիքներ :

Հոռութի գիրքը քննելով իբրեւ բարձրագոյն նկարագրի օրինակ, կը հանդիպինք առաջին անգամ անոր Հաւատարմութեան. — Թէեւ Սուրբ գիրքը Հոռութի նախնական կեանքի մասին մասնաւոր տեղեկութիւն մը չտար, բայց կրնանք հասկնալ թէ իր կեսութիւն եւ ամուսնոյն հետ անցուցած տասը տարիներու շրջանին ունեցած է հաւատարմութեան, խոնարհութեան եւ պարկեշտութեան կեանք մը, կեանք մը նաեւ տառապանքի եւ համբերութեան : Բնականաբար այդ կեանքը Հոռութի համար դիւրին չէր, եւ առանց դժուարութեան չանցուց, քանի որ անդաւակ էր, ինչ որ արեւելքցի կնոջ մը համար մեծ նախատինք էր, սակայն Հոռութ երկրաւոր օրհնութենէ զրկուած ըլլալով հանդերձ պատրաստ էր երկնաւոր եւ անտեսանելի բաներուն ահանջ դնել :

Նոյեմի, իր կեսուրը, պատմած էր Իսրայէլի Աստուծոյն եւ Անոր սքանչելիքներուն մասին, պատմած էր նաեւ թէ Աստուծոյ խոստմանց համաձայն Մեսիան պիտի գար ու Իր ժողովուրդը պիտի փրկէր :

Հոռութ, թէեւ օտարազգի, բայց փրկութեան կը կարօտէր, իր սիրտը աստուածային սիրոյն կը ծարաւէր, ասոր համար իր կեսուրին հետ ունեցած սիրոյ կապը օրէ օր աւելի կը զօրանար, ու հաստատուն էր առաւել, քան որեւէ

բնական կամ զգացական եւ բարեկամական սիրոյ կապ :

Հոռութի հաւատարմութեան փորձի ժամանակը քիչ յետոյ հասաւ : Ան կորսնցուց իր սիրելի ամուսինը, նաեւ ընտանիքի արժէքաւոր անհատները, այսպէսով իրենց ընտանեկան վիճակը դառնացաւ : Միայն երեք անաչր ու անգօր, անօգնական որբեւայրիներ մնացին :

Նոյեմի որոշած էր իր ծննդավայրը Յուդայի երկիրը վերադառնալ :

Հիմա էր վճռական ժամը :

Արդեօք Հոռութ իր հօրը տունը վերադառնալու էր եւ այսպէս ինքզինքը յաւիտենապէս զրկէ՞ր այն օրհնութիւններէն, որոնք Իսրայէլի ազգին սեփական էին, կամ թէ զատուէր իր բոլոր ազգականներէն եւ արձակուէր Մովսէսի մէջ անցուցած կեանքի բոլոր անցեալ կապերէն, որպէսզի իր կեսուրին հետ մէկտեղ ապահով ապաստան գտնէր՝ Ամենախաղաղին հովանաւորութեան տակ :

Հոռութ չ'երկմեցաւ, հաստատ համոզումով, հանդարտութեամբ որոշեց հաւատքի ճամբան ընտրել, եւ գնաց իր կեսուրին հետ :

Նկատի առնենք երկու երիտասարդ կիներու, Որփայի եւ Հոռութի նկարագրներուն միջեւ եղած տարբերութիւնները : Պարագանքը նոյնն էին, մինչ Որփա չկրցաւ ցվերջ յարատեւել : Սկիզբէն ինքն ալ կը փափաքէր Նոյեմիի հետեւել զէպի Իսրայէլի երկիրը, բայց չունէր այն սէրը որ ամէն դժուարութեանց մինչեւ վերջը կը համբերէ : Եւ քանի որ Նոյեմիի հետեւելով ոչ նիւթական շահ եւ ոչ ալ նոր ու երջանիկ ընտանեկան յարկ մը կազմելու կարելիութիւնը կը տեսնէր, ուստի դարձաւ իր երկրին, իր ժողովուրդին, զէպի խաւար հեթանոսութեան :

Չզացական սէրը կ'արտայայտուի համբոյրով եւ արցունքով, բայց հոգեւոր սէրը, այսինքն աստուածայինը, անխախտ է եւ մինչեւ ի մահ հաւատարիմ կը մնայ : Ահա այս տեսակ սէրն էր որ Հոռութի սրտին մէջ կը տիրէր :

Հիմա այլեւս Հոռութը կը գտնենք Բեթլէհէմի մէջ իր կեսուրին հետ : Հոս ալ իր օրապահիկը հայթայթելու աշխատանքին մէջ հաւատարիմ է : Աստուծոյն առաջնորդուած կ'երթայ հասկ ժողովելու Բոոսի արտը, ուր գործակիցներ իր բարի ու հանդարտ բնաւորութիւնը տեսնելով բարի վկայութիւն կուտան իրեն համար :

— Ճշմարտապէս խոնարհ եղողը իր անձնական արժանիքին շնայի :

Որովհետեւ Հոռութ հեթանոս էր, բնականաբար չէր ակնկալեր որ Իսրայէլի վայելած բարիքներէն ինքն ալ կատարեալ մաս եւ բաժին ունենար, ու ասոր համար Բոոսի իրեն ցուցուցած բարեարտութեան հանդէպ ինքզինքը բոլոր

րովին անարժան կը սեպէր: Այսուհանդերձ կ'որակաւորուէր որ անոր առատ շնորհքը վայելելու արժանիքն ունեցած էր: Այսպէս քայլ առ քայլ աւելի շնորհք գտնելով՝ Բոսսի ծառաներուն մէջ տեղ գրաւեց, մինչեւ իսկ անոնց հետ ճաշելու արտօնութիւնը վայելելով:

Հոռութ կատարեալ Յարատեւող մըն էր, ան իր գործի եւ ծառայութեան մէջ չգիտերեցաւ աստ եւ անդ, դաշտէ դաշտ մի քիչ աւելի պաշար հաւաքելու համար, այլ հաստատ կը կենար Բոսսի արտին մէջ առաւօտէն մինչեւ երեկոյ եւ մինչեւ հոգնաքին վերջը: Ան իր սկսած գործը լիովին կը կատարէր, ամբողջ օրուան ծանր աշխատանքէն վերջ կը ծեծէր նաեւ իր հաւաքած հասկերը, եւ առանց այլեւայլի իր աշխատանքին պտուղը ամբողջութեամբ կը բերէր կեսրտը: Դեռ ասկէ աւելին կայ. ոչ միայն օրուան վաստակը կը զոհէր իր սիրելի մօրը, այլ իր բաժինէն աւելցած կերակուրն ալ անոր կը բերէր:

— Հոռութ կուտար, կը զոհէր, կը բաժնէր, սրով հետեւ սէրը իրենը չփնտռեր: Այսպէսի սէր ունեցող մը կուտայ, միշտ կուտայ եւ շատ ուրիշներ իրեն բաժնեկից կ'ընէ եւ սրբան որ տայ այնքան աւելի կը հարստանայ:

Հոռութի սէրը յայտնի է նաեւ Հնազանդութեան մէջ: Ան հնազանդ հետեւող մըն էր, իրեն համար դժուար չէր իր կեսուրին հնազանդիլը, ընդհակառակն ուրախութիւն էր: Նոյեմի թեւադրութեանց միայն մէկ խօսքով կը պատասխանէր. «Ինչ որ ըսես, ան պիտի ընեմ»:

— Այսպէս պէտք է ըլլայ մեր պատասխանը երբ մեր Տէրը մեզի հրամայէ:

Ինչ էր Հոռութի հնազանդութեան վարձքը:

Առաջին պատեհութեամբ ան հանդիստ տեղ մը կը գտնէ իր ախրոջ ոտքերուն քով:

— Որքան քաղցր է այսպիսի հանգստաւէտ եւ խաղաղարար տեղ մը այն հոգիին, որ Բեթանիացի Մարիամին նման Յիսուսի խօսքը լսելու եւ Անոր ներկայութիւնը վայելելու համար անօթի ու ծարաւ կը զգայ:

Հոռութ իր ախրոջ ձեռքէն պարզ եւ ընդունեց, այսինքն վեց արդու գարի, զոր հաղիւ պիտի կրնար ունենալ մէկ շարաթուան ծանր ու քրտնաջան աշխատանքէ մը յետոյ, բայց ձրի շնորհքով մէկ անգամէն ընդունեց «աղէկ չափով, կոխուած, ցնցուած, լեցուն չափով» (Ղուկ. 2. 38): Սակայն ասիկա երախայրիքն էր այն առատ լեցունութեան, զոր պիտի ժառանգէր, երբ այն հարուստ սեփականատիրոջ հետ յաւիտենական ուխտով կապուելու ըլլար: Երբ Հոռութ իր մօր գարձաւ ուրախութեամբ եւ զոհունակ սրտով պատմեց անոր ամէն ինչ:

— Ամէն ով որ Աստուծոյ շնորհքը փորձած եւ

ճաշակած ու տեսած է որ Տէրը բարի է, այնպիսին պէտք է բացարձակապէս վկայէ. պէտք է պատեհութիւն փնտռէ վկայելու, ինչպէս Դաւիթ կ'ըսէ Սաղմ. 42. 16ի մէջ, «Եկէք լսեցէք դուք ամէնքդ որ Աստուծոյ կը վախնաք, ու պատմեմ ինչ որ ըրաւ իմ անձիս»:

Ուշադրութեան արժէք նաեւ Նոյեմիի խրատը: «Աղջիկս նստէ՛» այսինքն «հանդարտ կեցիր»:

— Միայն անոնք կրնան Տէրոջը առջեւ հանդարտ կենալ ու Անոր փրկութեան սպասել, որոնք Տէրոջը ձրի շնորհքը վայելած եւ անոր մէջ ապրած են:

Հոռութի սպասելու ժամանակը երկայն չեղաւ, նոյն օրն իսկ ամէն բան լմնցաւ: Թշնամին ամօթահար եղաւ եւ փրկութիւնը ապահովուեցաւ հաւատարիմ զնոյին «Ամէն բան կատարուեցաւ»ով:

Սրդ այլեւս Հոռութ դուրսը ծառաներուն խումբին մէջ չէր, այլ ներսը, տանը մէջ իրբեւ հարուստ տանտիրուհի, ազատարարին հետ մտերիմ եւ ներքին հաղորդակցութիւն ունենալով ամէն պատիւ եւ առանձնաշնորհ վայելելու արժանի դերքին մէջ: Ովո. Բ. 16 համարին մէջ կ'ըսէ «Ու պիտի ըլլայ որ այն օրը կ'ըսէ Տէրը, զիս իմ այրս պիտի կոչես ու մէյ մըն ալ Տէրս պիտի չկոչես»:

Մովաբացի Հոռութ, երբ այս երջանիկ եւ փառաւոր կեանքին վայելքներուն մէջ կ'ապրէր, երբեք չմոռցաւ իրեն վշտակիր, խեղճ ծեր մայրը Նոյեմին, զոր իր ընտանեկան յարկին մէջ առնելով խնամեց ոչ այնպէս ինչպէս երբեմն կ'ընէր, իր ծանր աշխատանքին վաստկածով, այլ Բոսսի տան բոլոր լեցունութեանէն:

Ժամանակի ընթացքին երբ Աստուած իր աղախինին աղօթքը լսեց ու անոր որդի մը շնորհեց, այն ատեն ալ Նոյեմի այն մեծ ուրախութեան մասնակից եղաւ ու մասնակց խնամելու եւ հազարու արտօնութիւնն ունեցաւ:

Մայր ու աղջիկ այնպիսի սիրով մը իրարու կապուած էին որ դրացիները կ'ըսէին Նոյեմիի որդի մը ծնաւ: Անոնք գիտէին Հոռութի հաւատարմութիւնը եւ կը վկայէին թէ անոր սէրը իր կեսրտը հանդէպ եօթը որդիի սէրէ աւելի աղէկ է:

Հոռութի խոնարհութիւնը եւ հեզութիւնը նոյն իսկ իր որդւոյն տուած անունէն յայտնի կ'ըլլայ: Ան իր որդին Ովբէթ կոչեց, որ կը նշանակէ «Ծառայող»: Մօբգ մը որ ծառայելու կարող էր եւ որ նաեւ Դաւիթ թագաւորին նախահայրը եղաւ:

Ահա այսպէս խեղճ Մովաբացի կինը Հոռութ, որ իորայէլի քաղաքակցութեանն բոլորովին օտար եւ խառնամանքներուն ուխտէն հեռու էր, Աստուծոյ տանը հաղորդակից ըլլալէ զատ, Մե-

— Ո՛րքան սքանչելի էն Աստուծոյ ճամբաները
Իրմէ վախճաններուն համար, ամէն անոնց, որոնք
բոլոր հոգիով Անոր կ'ապաւինին եւ Անոր քայ-
լերուն կը հետեւին :

Պէտք է մեզի Հոսթի օրինակին հետեւիլ,
հաւատարմութեան, յարատեւութեան, հնազան-
դութեան, խոնարհութեան եւ հաւատաւ հաւատ-
քի մէջ, եւ այսպէս մենք ալ նմանող պիտի ըլ-
լանք անոնց, որոնք «հաւատքով եւ համբերու-
թիւնով խոտմուսնքները ժառանգեցին» (Եբր.
Զ. 12) :

Ք. Վ.

ԱՆՊԱՇԽԱՐԿԵՐՈՒՄ

ԼՍԷ՛

ԻՆՉ ՈՐ ԱՍՏՈՒԱԾ ԸՍՍԻ

Ա. ԱՍՏՈՒԱԾ ԸՍՍԱԼ.—

«Շատ մասերով ու շատ կերպերով առաջ-
ուրնէ խօսելով Աստուած հայրերուն հետ մար-
դարէներով : Այս վերջին օրերս Իր Որդիովը խօ-
սեցաւ մեզի հետ, զոր ամէն բանի ժառանգ դրաւ,
որով աշխարհն ալ ստեղծեց» : Եբր. Ա. 1-2 :

«Զուլապէ՛ք, չըլլայ որ մերմէք զանկէա որ
ձեզի կը խօսի» : Եբր. ԺԲ. 25 :

«Մտի՛կ ըրէք, ահա՛նչ տուէք, մի հոգաբա-
նաք, վասնզի Տէրը խօսեցաւ : Ձեր Տէր Աստուծոյն
փառք տուէք, զիս խաւարը վրանիդ չհատած ու
ձեր ոտքերը մտնէ լեռներու վրայ չտահած, եւ
ձեր լոյսի սպասած աստեղը Աստուած զանկէա
մահաւան ստուերի չփոխած, ու զանկէա թանձր
մէկի չը դարձուցած» : Եբր. ԺԳ. 15-16 :

«Ան որ լսելու ահա՛նչ ունի՛ թող լսէ» : Մատթ. :
ԺԳ. 9 :

Բ. ՄԵՂԱԼՈՐԻՆ ՎԻՏԱԼԻ.—

«Միքալ ամէն բանէն աւելի խաբէրայ ու
խիստ չար է, զանիկա ո՞վ կրնայ պիտաւ : Ես
Տէրս սիրտը կը քննեմ» : Եբր. ԺԷ. 9-10 :

«Արդար մը չկայ՝ եւ սչ մէկ : Ամէնը խոտ-
րեցան, մէկտեղ անպիտան եղան, ապկալութիւն
ընող մը չկայ, մէկ ալ չկայ» : Հոովմ. Գ. 10, 12 :

«Ինչու որ Անոր առջեւ մարմին մը պիտի
չարդարանայ, օրէնքին զործերովը» : Հոովմ. Գ. 20 :

«Խարուհիւն չկայ : Ինչու որ ամէնը մեղք
զործեցին» : Հոովմ. Գ. 22-23 :

Գ. ՄԵՂԱՅ ԱՎԱՍԻԺ.—

«Բանգի Աստուծոյ բարկութիւնը երկինքէն կը
յայտնուի մարդոց բոլոր ամբարշտութեանը եւ
անիրաւութեանը վրայ, որոնք ճշմարտութիւնը
անիրաւութեամբ քննէր են» : Հոովմ. Ա. 18 :

«Չըլլայ որ մէկը ձեզ խաբէ փուռ խօսքերով,
վասնզի այս բաններուն համար Աստուծոյ բար-

կութիւնը կուգայ անհնազանդութեան որդիու-
թեան վրայ» : Եբր. Ե. 6 :

«Բանգի մեղաց վարձքը մահ է, բայց Աստու-
ծոյ ձրի պարգեւը յաւիտեանական կեանք՝ մեր
Տէրը Յիսուս Քրիստոսի ձեռքովը» : Հոովմ. Զ. 23 :

«Յւսի որ կենաց զրքին մէջը զրուած չը
զոհուեցաւ, կրակի լիճին մէջ ձգուեցաւ» : Յայտ.
Ի. 13 :

«Բայց վախճաններուն, ու անհաւատներուն,
եւ պիղծերուն, ու մարգապաններուն, ու պեռ-
նիչներուն, եւ կախարդներուն, ու հոռապաշտնե-
րուն, եւ բոլոր ստախոսներուն բաժնիք, կրակով
ու ձուլմամբ վառած լինին մէջը պիտի ըլլայ, որ
է երկրորդ մահը» : Յայտ. ԻԱ. 8 :

(Շար.)

ԹՈՒՐԳԵՐԷՆ ՄԱՍ

ՃԻԿՄԼԷ ԵՕԼՈՒ ՇԱՇԸՐՋԱԼԱՐԱ

(1.2 Ինճի Կուսակցութեան տէր)

Սանիկն.— Կիւնահըն թապիաթընը
կէօրիւյօրը. Գոյսւնլար կիպի եօլու շա-
շըրմը, քէնի եօլունա տէօնմիւշ
իաիք : Կիւնահըն թապիւրի պու տրր :
Շաշըն պիւր զոյսն սիւրլսիւ կէօրմիւշմիւրիկ
հէր պիւրի պիւր եօլ թաթմը, քիտի եօլունա
սէյրիւյօր, ներէյէ տօղրու տիւշիւն, աղբակի
նէ տիւր հիստայ էթմէդ, շաշըն տըր վէօ քէն-
տիւրի եօլունա կիթմիւր :

Կիւնահըն թապիաթըն հազըրնաւ պու այլթ-
տէ իքի շէյ էօյրէնիյօրը : Ա. Կիւնահ շէֆա
էօմիւր տիւր : Կիւնահն նէ թահաւա վէրլիւսն
վէր, թահաւա եւ իսմ նէնիւյի վէ անըն թա-
պիաթընը թէպիւր էթմէդ : Հէր պիւրմիւր քէնաի
եօլունա տէօնմիւշ իաիք : Կիւնահ եօլու շէֆա
իւթիւսապ էթմիւրի եօլ տրր : Պիւրմ իրաւե-
թիւմ օլմաը, պէնիւր տրդում եկրիւր պուլմաը,
էվվիւր պէն ինթիւսապ էթմիւրիւմ, եիւքսէք
քիւրսիւ պանա թապիւմ օլունմաը : Հէր քէն
վէ հէր շէյ պէնիւմ էթրաֆըմաւ տէօնմէլի : Ալ-
լահ, Քրիստոս վէ Անըն քիւրսիւ պիւր շէֆա
իւրմէթ էթմէլի . . . Վայ կիւմիւր օլ չօպանըն
պաշընա, վայ օլ քիւրս մէլիւրիւ, օլ թէշքի-
լաթա, օլ ֆիւրտէ քի պէնիւմ իրաւէթիւմ վարը
տուրր . . . :

Նէֆա էօմիւր իչիւն էյի եւ քէօթիւ, տօղրու
եւ եանըր, հաղիգաթ եւ եալան ֆարդ էթմէդ :
էկիւր նէֆա ֆիւրա քէօթիւ սիւր շէյսէն խօշա-
նուր իսէ անը կտէր, լաքին էկիւր շէֆաիւ
իւրիւք տահա էյի էկիւր իսէ էյիւրէք կտէր : Պիւր
եալան սէյլէյիւք, իշաէ հիւրէ կտէրէք, նէֆաիւ
զէնիւր օլմադ հասրէթիւրի տօլաւապիւր իսէ,

պիր եալանտան նէ՞ օլուր եալան սէօլէր. ֆա-
զաթ Կիրակի կիւնիւ քիլիսէյէ կիթմէքաշն,
պաշղալարը 10 վէրտիյի վազթտա 100 վէրմէք-
աշն զիյաւտէ իզգէթ կէլիւր իսէ պու աաւմ աւը
տա եափար: Քիլիսէյի եափազ իլէ երգազ
արաւորտա պիր ֆարգ հօգ, էկէր քէնտի նէֆ-
սինէ շէրէֆ վէ իզգէթ կէթիւր իսէ: Հէր իշտէն,
թէշէպպիւտէն մազսէտ պէնիմ իսմիմ գիքը
օլունմալը, մէտի օլունմալը:

Կիւնահքեարըն «սարֆ»ընտա (քերականու-
թիւն) պիր զաթ վար, օ պէն տիր, վէ աւըն պիր
հուրուամը վար, պէն, պէնիմ, պանա, պէնի, պէն-
տէն, պէնիմ իլէ, տիր. պէն եափարմ, պէնիմ
սէօգիւմ, պանա օլմալը, պէնի կէօրմէլի, պէնտէն
իզի օլմալը, պէնիմ իլէ իշտէմէլի: Հէր Կիրակի
քէնտի եօլունա տէօնմիւշ իտիք, նէֆս էօմրիւ-
նիւ եաշամազտա իտիք:

Բ. Կիւնահ շաշլընը տըր: Գօյունլար կիպի
եօլու շաշլըմը իտիք: Կիւնահ, տիվանէլիք
տիր, աղլըզլըզ տըր, շաշկընըզ տըր:

Այո սըրա տաթմ ըրիյաւընտան ալըզան պի-
րի կիպի ույանըր, պիր խաթթալըզ, պիր ֆէլա-
քէթ, պիր էօլիւմ, մալմա զիյան տիրթէր, վու-
րըր, ույանտըրըր վէ քէնտի քէնտիմիզէ կէլիւր
վէ տէրիզ, պու նէ՞ տանազլըզ, Փէտէրիմի նէփն-
տէ նէ չօգ խըտմէթ քեարլար տօյուպ կէլիւրիյօր
պէն իսէ պուրատա աճըզտան հէլաք օլույօ-
րում: Սէրվէթ իշիւն ճանըմը ոսթտըմ, միւլք
վէ ազլէ սահիպի օլտըմ, վէ պիր չօգ սէնէլէր
իշիւն եղըլմը շէմալն վար, միւլթազպէլի
թէլմիւն օլմը տըր. էյ ճանըմ, եէ, իշ, սէֆա
սիւր, տէտիյիմ կիճէտէ կանէն կէլիպ միւլքէ-
րիմի եազտը, խըրսըզլար էշեամը եազմալտըր,
զալիմ տիւշմէն եազմալ տաղըթտը, էլան դա-
րիպ եէրէրտէ էքմէյէ միւլթաճ եաշամազտաիմ:
Պունլորըն ճիւլէսիւնի քիմ իշիւն եղտըմ, նէ՞
տիվանէլիք:

Սըհէթ վէ գուվէթ հէր շէյ տիր զանն էթ-
տիմ, ալիսէ էօնիւնտէ հիւնիւմէ տիզպաթ էթ-
տիմ, վիճուտիմի գուվէթէնտիրտիմ վէ սըհ-
հէթտէ քէմալիյէթէ եէթիշտիմ տէյու պիլտիյիմ
կիւնտէ պիլէ գալիմ իլէթ միքրօպը ճիկէրիմէ
տիւշիւպ վէրէմ պէնի թիւքէթտի... էյ վա՛հ
... պուտա ֆանի կէլիճի իմիշ:

Յըհէնօ շէհրիւնտէ պազ վէ սէրվէթիւնի դաիպ
էթմիշ պէլի պիր աաթմէ ըպթ կէլտիմ, նա-
սըլըն, նէ եափազտաւըն տէյու սիւալ էթտիմ
իսէ, Ալահա շիւքըր գուվէթ վէրմիշ շիմաի
պազտա իշէյօրմ, էվվէ իշի կիւնիւ ունուլթ-
մը իտիք, պօշ եէրէ գահվէլէրտէ օյուն իլէ
վազթ կէլիւրիյօր իտիք, շիմաի իշէյէ վէրէճէք
փարա օլմատըզընտան պիզ իշէյօրըզ, պու
եօղըզընտա պիր էյիլիյի վար իմիշ: Ախէր պիր
շէյ. պէնիմ սէրվէթիմ օլտուզը գէման, էօքսիւզ-

լէրէ, սէֆիլիւրէ պօլ պօլ վէրտիմ, հէլէքի էօյլէ
վէրմիշիմ, օլմատա օտա պաթաճազ իտի, վէր-
տիյիմ քեարլըմ տըր տէյու ճէվապ վէրտի:

Սէրվէթի սէրվէթ խաթըր իշիւն, սըհէթի
սըհէթ խաթըր իշիւն, շա՛ն ու շէրէֆի, շան ու
շէրէֆ խաթըր իշիւն թօփլայան քիմնէ, մազ-
սէտսիզ, նիշանկեանօրըզ, ճիւլթսիզ աթըմը
պիր գոյշըպ պէնիզըր տանազլըզ տըր: Քէնտի
եօլունու նիւքէյէ, նէ իշիւն կիթտիյինի պիլմէյէն
շաշլըմը պիր գօյուն էօմրիւ տիր, կիւնահ էօմ-
րիւ:

Սալիսէն կիւնահըն աշվասընը կէօրիւյօրըզ,
վէ Բապպ (Եհօվա) ճիւլէմիզի կիւնահընը Անա
եիւքէլէթտի:

Ա. Տէվա տալի կիւնահ գաւար ումուլի
տիր: Ճիւլէմիզ շաշլըմը իտիք, հէր պի-
րիմիզ տէօնմիւշ իտիք. Ճիւլէթիւն կիւ-
նահընը տանա եիւքէլէթտի, Ալահ սէմատան եիւք-
սէք կէօք կիւրիւլթիւնի իլէ իսմիւնի շաղըրըպ,
էյ աաթմ սէնիւն կիւնահընը Անա եիւքէլէթտիմ
տէսէ, եախօտ Քիթապը Սուզատտէսիւն պիր եէ-
րիւնտէ իսմիւնի, լաղըզընը պուլտան, պունլարտա
շիւպհէ էտիլէպիլիւր քի փէք ինթիմալ Բապպ
սէնի իմա էթմէյօր տէյու շիւպհէ էտէպիլիւրիւն,
սէնիւն իսմիւնտէ, տիւնեանըն թարիլիւնտէ պաշ-
գա տաթմէր եաշամը օլապիլիւր: Յազաթ
«ճիւլէմիզի» լուղէթի իշիւնտէն խալը օլունմը
օլան հէր պիր տաթմ սէն վէ պէն միւնտէրիճ իզ:
Ճիւլէմիզի կիւնահընը Անա եիւքէլէթտի:
Պէյազ վէ սիյահ, սարը վէ զըրմըզը, գէնկիւն վէ
ֆազիւր, ալիմ վէ ճահիլ, ճիւլէմիզ պուրատա
տալիլիւր:

Բ. Տէվա օլմը պիթմիշ պիր վազաա տըր:
Ճիւլէմիզի կիւնահընը Անա եիւքէլէթտի:
Յիլան վէ ֆիլան շարթլարը իճրա էտէր իսն
Բապպ կիւնահընը Անա եիւքէլէթտէք, միւլթազ-
պէլ իշիւն պիր վատ տէյիլ, եախօտ ֆիլան պիր
եօլտա հարէքէթ էտէր իսն եիւքէլէթտիլիւր,
պիր ինթիմալիյէթ տէյիլ, իլա կէշմիշտէ իճրա
էտիլիւր, պիթմիշ օլան պիր վազաա տըր:

Էկէր հանլըշ աշլաշլմազ գօրգուսը օլմազ
իսէ պիր աաթմ տահա իլէրի կիտէյիմ. իման
վասըթտընը պու խէլասը գապուլ էտէպիլիւր-
սին, լաքին իմանմըզ տէյիլ քի պու խէլասը
եափար, հաղըրլար, օ եափըլմըշ, հաղըրլանմը
օլան պիր վազաա տըր: Տուտաա աւը մալ էտէ-
պիլիւրսին, տլուպիլիւրսին լաքին տուա պիլէ խէ-
լասը հաղըրլամազա հաղըրլանմը օլան վազա-
այը գապուլ էտէպիլիւր: Էյիլիյիմիզ, սալահմըզ
պիզի խէլաս վազաաւընա լայըզ զըլար, պուտա
տէյիլ, պիզ տահա կիւնահքեար իքէն Օ սէվտի
վէ եիւքէլէթտի:

Տիւլէ «Ջիւրա Ալահ տիւնեայը օլ գաւար
սէվտի քի Քէնտի Իպն Վահիտիւնի վէրտի...»
Յով. 3. 16:

«Վէ պիտի լինի՞ր քի էճատատան զալմա պաթըլ մէսլէքտէն, ֆանի կիւմիւշ վէ եա ալթոււնլա տէ- յիլ անճաղ գուսուրսըզ վէ լէքէսլզ գուզոււնըն, հանի Բրիստոսըն զի գըյմէթ գանը ֆիտիյէսիյլէ խէլաա պուլաւընըզ. Օլ քի տիւնեանըն թէէսի- սինտէն ապտէմ Ալլահա մալիւմ իտի ինէտէ, իմանընըզ վէ իւմիւտիւնիյ Ալլահա օլսոււն տէ- յիւ, սիզին իչիւն . . . իման էտէնլէր իչիւն պէ- յան օլսոււնը» 1 Պիտ. 4. 48.21 :

Գ. խէլաուը հազըրլայան Բապպ տըր «ՐԱՊՊ ճիւմլէմիզին կիւնահընը Անա եչիւքլէթտի» : Զի- յաֆէթի հազըրլայան էվ սահիպի տիր : խէլա- սըն իւք աաթմընը վէ սօն աաթմընը ալան Օ տըր : «Սիզտէ իսթէմէյի վէ իշլէմէյի իճրա էտէն Բապպ տըր» : Պիզ էլան պիթմիշ օլան պիր վա- զաա էօնիւնտէ տուրմագտայըզ : «Իշլէթ սու պէ- նի վաֆթիզ օլմապտան քիմ մէնն էտէպիլիւր» : Իշլէթ սօֆրա եչմէքտէն քիմ տուրտուրապիլիւր : Իշլէթ սու իչմէքտէն քիմ մէնն էտէպիլիւր . . . :

Սէն քէնտին, քէնտինի մէնն էտէպիլիւրսին քի պու էպէտի հայաթ սուլարընա պազարազ սուզըզըզտան չաթլայաաըն, էպէտի հայաթ էք- մէյի էօնիւնտէ աճըզտան էօլէսին :

Մ. Մ. ԱՅՃԵԱՆ

Փետեւտինա, Գալիֆօրնիա

19 Հոկտ. 1927

Ս Օ Ն

ՐԱՆԱԹ ՏՈՒՐՄԱՂԼԷ ԿԵԼԷՆ ԵԱՐՏԸՄ

Պիր մատամ շէօյլէ նազլ էտիյօր.— Թէվ- պէմտէն պիր գաշ սէնէ ոսնկրա պէնի ճիւմլէ խաբիճի իշլէրտէն այըրարազ իքի ուզոււն սէնէ- լէր խապթալըզ եաթաղընա պաղլամազ Բապպա միւնասիպ կէօրիւնտիւ : Պու մէշղուլէթսիզլիւք իւզէրիմէ գիյատէսիյլէ աղըր պաաթը վէ պէն Բապպա տէվամի սուրէթտէ նիյազ էթտիմ քի էվվէլէքի կիպի խապթալարը գիյարէթ էթմէք վէ պիլկիսիզլէրի թալիմ էթմէք իչիւն պանա սըհ- հէթ ու գուվլէթիմի իաաթ էյլէսին : Վաիզլէր վէ պաազը տօսթլար պէնի գիյարէթէ կէլտիք- լէրինտէ անլէրտէն տաիմա սըհհէթ վէ իմանը- մըն գուվլէթլէնմէսի իչիւն տուա էթմէլէրինի ըէճա էթտիմ իսէտէ, հալըմ էքքիսի կիպի զալ- տը : Իքիւնսի սէնէնիւն նիհայէթինէ տօղրու էվ- վէլէճէ թանըմաաթըզմ պիր վաիզ պէնի գիյարէթ էթտի : Օգուտու, պէնիմ իլէ տուա էթտի վէ պանա պէօյիւք իշթիւրաք կէօսթէրէրէք տիզ- զաթ իլէ պէնի տինկլէտի : Պէն քէնտինէ շիֆա պուլամաաթըզմըն սէպէպի իմանըմըն զաաֆը օլտուղոււնու գիքը էթտիլիմաէ վաիզ պանա շէօյ- լէ տէտի, «Մատամ սիզ քիպրիթ սաթան իսթի- յար Լիզէթ հազընտա հիչ իշթմիշմիսինիզ» : Պու գարը Յիսուսա կէլտիլինտէ էփէյի հաշըլը

իտի վէ թէվպէ էթտիլի անտէն լիթիպարէն քէն- տինի պէօյլէ սէվմիշ վէ կիւնահընընը գանըլէ եըյգամըլ օլան պիր գաթ իչիւն նէ գատարտա իշլէսէ քէնտինէ ազ կէօրիւնիւյօր իտի : Մէր- գումէ հէր թարաֆը սօլաշարազ էյիլիւք էտէր վէ Բապպ վէ խէլաաքեաըն հազընտա պաշ- զալարա սէօյլէր իտի : Օ խապթալարա մուզա- յէտ օլուր, մահգոււնարը գիյարէթ էտէր, թէվ- պէսիզլէր վէ թաիֆէլէր իչիւն տուա էտէր, վէ պաշղա տօսթլարըն վէրտիքլէրի հէտիլէլէրի միւնթաճլարա տաղըտըր իտի, պիր սէօզ իլէ օ Բապպըն իշիւնտէ սաաթզ օլան պիրի իտի : Լա- քին ալտըլը պիր սօղուզ ափանսըզ քէնտինի պու միւպարէք իշիւնտէն այըրար վէ եաթաղա տիւշէրէք պիր տահա գալըզմաաը : Անըն խաա- թալըլը ուզոււն վէ գահմէթլի օլտու, լաքին պու պիւթիւն խապթալըլը էսնասընտա պու իսթի- յար Լիզէթ էվվէլէճէ իշլէտիլի գէմանտա նաճըլ մէսրուր իտի իսէ կինէ այնի տըլէճէ մէսրուր իտի : Զօզ տուա էտէր, էվվէլէճէ պիլտիլի իւհի վէ ալէթլէրի թէքէրիւր էտէր, էօյրէնմիշ օլ- տուղու շէյլէր հազընտա տիւշիւնիւր վէ պիր ազտան կիտէճէյի օլ ճէլիլ վաթան իչիւն շազ օլուր իտի : Պիր կիւն տօսթու օլան իսթիյար պիր խօճա քէնտինի գիյարէթէ կէլտի, էվվէլէճէ պու գատար մէշղուլ օլան պիր գարընըն պէօյլէ պէօյիւք սապընա թէաճճիւպ էյլէտի վէ գարը- յա խիթապէն շու հալ հէր հանկը պիր քիմսէյէ օլտուղոււնտան գիյատէ սանա կիւճ օլա կէրէք տիւր տէտի : Տօսթուա ալա էօյլէ տէյիլ տիր տահա պէն րահաթ իքէն Բապպ պանա շօզ տէֆա տէր իտի, Լիզէթ շուսու հափ, պուսու եափ, շուրալա կիթ, պուրալա կիթ : Վէ պէն էլիմտէն կէլտիլի գատար պանա էմը էթտիլի շէյլէրի հափմաղա չալըշըր իտիմ : Լաքին շիմ- տի հէր կիւն պանա Լիզէթ րահաթ տուր վէ էլէմ չէք տէտիլինի իշիւնիյօրում :

Պուսու նազլ էտէն մատամ պու նազլէլէթին քէնտի իւզէրինէ տէրին պիր թէլէսի պրազմըլ իտիլինի գիքը էտէրէք աէյօր — Սըհհէթիմ իչիւն տէվամի սուրէթտէ էթտիլիմ տուալարըն, իման նէթիճէսի օլմալըպ իլա պէնիմ շաթսի իրատէթիմին նէթիճէսի օլտուղոււնա պէրազճա անկուտըմ : Ալլահըն հազընտա թէվաղու էյլէտիմ վէ անտէն գուվլէթ թալէպ էթտիմ քի անըն միւնասիպ սալտըլը հօլա րազի օլարազ իրատէթիմին թապի օլալըմ : Պու անտէն իթի- պարէն մէսուտ վէ րահաթ օլտուա վէ ազ վազթ սօնկրա պանա թէքրար սըհհէթ վէրմէճի Բապ- պա խօշ կէօրիւնտիւ :

Միւթ. Ե. Պ.

Le Gérant : PASTEUR KALTENBACH

Տպգր. Ա. Երեցեան, 40, Րիւ տէ Տօմինիլիւն - Մարտէլ